«ՄԵՂՐՈՒ ՏԲԿ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-21/3-1 »

ք.Մեղրի << 22 >> հունիսի 2021թ.

<< Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն >> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Արտյոմ Կարապետյան (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Շինանյութերի և գործիքների»** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ապրանքը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ապրանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը ՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ապրանքի մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ապրանքի արդյունքը, իսկ Ապրանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ապրանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ապրանքը ընդհանուր գինը կազմում է 653650 (վեց հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30-ը դեկտեմբերի 2021թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ապրանքի մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանգրով նախատեսված Ապրանքի մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ապրանքը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ՝	ՎԱՃԱՌՈՂ՝
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ	Ա/Ձ Արտյոմ Կարապետյան
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42	ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Ա. Խաչատրյանի 6
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի	Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099003354200	Հ/Հ 16099101233900
ՀՎՀՀ 09705024	ՀՎՀՀ 79510714
Էլ. Փոստ agarak-hosp@mail.ru	Էլ. Փոստ harsam1976@mail.ru
Հեռ.0286-60685	Հեռ. 093753500
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ-ի տնօրեն՝ / Լ. Վարդանյան	Ա/Ձ / Ա. Կարապետյան

Հավելված
<<_22_>> հունիսի 2021թ. կնքված
N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-21/3-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չ/հ	անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Տեխնիկական բնութագիրը
1	Պտուտակահան էլեկտրական (шурупавёрт)	հատ	1	19800	19800	պտուտակահան էլեկտրական (шурупавёрт)
2	Տափակաբերան աքցան (плоскогубцы)	հատ	3	1800	5400	տափակաբերան աքցան (плоскогубцы)
3	Աքցաններ (кусачки)	հատ	2	1800	3600	աքցաններ (кусачки)
4	Յազվա կլյուչ	հատ	1	2000	2000	.փ»-՞»»մմ
6	Մանրասղոց (ножовка) /գործիք/	հատ	1	1200	1200	՞»-՝»սմ երկարությամբ
7	Մուլտիմետր	հատ	1	2800	2800	մուլտիմետր
8	Մուրճ 0.5 կգ-ոց	հատ	1	1300	1300	մուրճ 0.5 կգ-ոց
9	Սղոց փոքր	հատ	1	1200	1200	սղոց փոքր
10	Մեխանիչ մեծ /гвоздодер/	հատ	1	3000	3000	մեխանիչ մեծ /гвоздодер/
11	Բահ կոթով ուղիղ	հատ	2	2000	4000	բահ կոթով ուղիղ
12	Փոցխ կոթով	հատ	1	1600	1600	փոցխ կոթով
13	Գայլիկոն (сверло) ալմաստե Φ3մմ-ից 13 մմ	հատ	1	3200	3200	սվերլո փայտե Φ3մմ-ից 13 մմ
15	Անկյունային հղկող մեքենայի (балгарка) քար կտրող Φ125մմ	հատ	10	310	3100	կտրող Φ125մմ
17	Սառը ջրի վինտիլ պլաստմասի կես պտույտ Φ20մմ	հատ	45	300	13500	պլաստմասսայե ,կես պտույտ Φ20մմ
18	Խողովակ գիպկի /էգ+էգ/ 40 սմ մետաղյա	հատ	45	900	40500	գիպկի /էգ+էգ/ 40 սմ մետաղյա
19	Լոգարանի ծորակ խողովակով և ցնցուղով	հատ	2	11000	22000	լոգարանի ծորակ խողովակով և ցնցուղով

20	Զուգարանակոնքի ջրի բաքի ներքին մեխանիզմ	հավաք.	10	3500	35000	զուգարանակոնքի ջրի բաքի ներքին մեխանիզմ
21	Էլեկտրական վարդակ (розетка) հողանցումով	հատ	10	580	5800	էլեկտրական վարդակ (розетка) հողանցումով
22	Խրոց (вилка)	հատ	40	245	9800	խրոց (вилка)
23	Լար պղնձե բազմաջիղ երկշերտ պաշպանվածությամբ 2X2,5 մմ	մետր	100	280	28000	լար պղնձե բազմաջիղ երկշերտ պաշպանվածությամբ 2X2,5 մմ
24	Լար պղնձե բազմաջիղ երկշերտ պաշպանվածությամբ 4,5 մմ	մետր	20	450	9000	լար պղնձե բազմաջիղ երկշերտ պաշպանվածությամբ 4,5 մմ
25	Էլկեկտրական հաղորդիչ 3 սարքավորում միացնելու հնարավորությամբ՝ հողանցումով	հատ	10	600	6000	էլկեկտրական հաղորդիչ 3 սարքավորում միացնելու հնարավորությամբ՝ հողանցումով
26	Էլկեկտրական հաղորդիչ 4 սարքավորում միացնելու հնարավորությամբ՝ հողանցումով	հատ	10	800	8000	էլկեկտրական հաղորդիչ 4 սարքավորում միացնելու հնարավորությամբ՝ հողանցումով
27	Դռան փականի միջուկ 10մմ երկարությամբ	հատ	38	1100	41800	դռան փականի միջուկ 10մմ երկարությամբ
28	Ներքին դռան փական	հատ	5	3400	17000	ներքին դռան փական
29	Կախովի առաստաղի էլ լամպ միջին չափսի 100W	հատ	40	240	9600	կախովի առաստաղի էլ լամպ միջին չափսի 100W
30	Կախովի առաստաղի LED լամպ Φ 12,5 մմ 11W ռելեով	հատ	48	2000	96000	կախովի առաստաղի LED լամպ Φ 12,5 մմ 11W ռելեով
31	Լույսի ռելե լեդ լամպի	հատ	20	750	15000	լույսի ռելե լեդ լամպի
32	Փողոցային լույսերի ԼԵԴ լամպ 60W	հատ	25	1200	30000	փողոցային լույսերի ԼԵԴ լամպ 60W
33	Կոթառ էլեկտրոլամպերի (патрон)	հատ	10	180	1800	կոթառ էլեկտրոլամպերի (патрон)
34	էլեկտրական լամպեր (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության 100 Վտ	հատ	500	95	47500	էլեկտրական լամպեր (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության 100 Վտ
35	Հիվանդի մահճակալի անիվ	հատ	20	1700	34000	ըստ պահանջված տրամագծի
36	Էլ տաքացուցիչի տենի անիվ	հատ	4	450	1800	էլ տաքացուցիչի տենի անիվ
37	Էլ տաքացուցիչի ապակիով պարույր 40սմ	հատ	10	400	4000	էլ տաքացուցիչի ապակիով պարույր 40սմ
38	Դռան մեխանիկական փական	հատ	10	350	3500	դռան մեխանիկական փական
39	Մարտկոց /Էլեմենտ/ փոքր	հատ	100	10	10000	փոքր 1.5V

40	Մարտկոց /էլեմենտ/ միջին	հատ	100	10	10000	միջին 1.5V
41	Մանրասխոցի (ножовка) պալատնոյ	հատ	5	100	500	՞»-՝»սմ երկարությամբ
43	Սկոչ մեծ	հատ	20	525	10500	լայնությունը 48-50մմ, թափանցիկ
44	Շինարարական փչովի փրփուր մեծ	հատ	3	2000	6000	շինարարական փչովի փրփուր մեծ
45	Փչովի սոսինձ ՄԴՖ-ի, փայտի մեծ	հատ	10	1450	14500	փչովի կլեյ ՄԴՖ-ի, փայտի մեծ
46	Պլաստմասսե դյուբել 12 մմ-ոց	հատ	500	10	5000	պլաստմասսե դյուբել 12 մմ-ոց
47	Փայտե շուրուփ 12 մմ-ոց	հատ	500	15	7500	փայտե շուրուփ 12 մմ-ոց
48	Սիլիկոն թափանցիկ	հատ	10	950	9500	սիլիկոն թափանցիկ
49	Ներկ փայտի և երկաթի ունիվերսալ	կգ	10	900	9000	ներկ փայտի և երկաթի ունիվերսալ
50	Ներկի խոզանակ միջին չափսի	հատ	3	650	1950	ներկի խոզանակ միջին չափսի
51	Լատեքս	կգ	20	470	9400	լատեքս
52	Լատեքսի խոզանակ միջին չափսի	հատ	5	1200	6000	լատեքսի խոզանակ միջին չափսի
53	Թափանցիկ լաք	կգ	5	2200	11000	թափանցիկ լաք
56	Ծեփամածիկ գիպսային	կգ	30	150	4500	ծեփամածիկ գիպսային
57	Ծեփամածիկ կավճային	կգ	30	216.66	6500	ծեփամածիկ կավճային
Ընդամենը վեց հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր հիսուն դրամ					653650	

Նախատեսվում է գնել 2021 թ-ի ընթացքում: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից: Ապրանքը մատակարավում է գնորդի կողմից ստացված պատվերից հետո 3 օրվա ընթացքում:

ԳՆՈՐԴ՝
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ. Փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ.0286-60685

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ-ի տնօրեն՝ / Է. Վարդանյան

ՎԱՃԱՌՈՂ՝
Ա/Ձ Արտյոմ Կարապետյան
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Ա. Խաչատրյանի 6
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099101233900
ՀՎՀՀ 79510714
Էլ. Փոստ harsam1976@mail.ru
Հեռ. 093753500

Ա/Ձ / Ա. Կարապետյան

Հավելված 2
<<_22 >> հունիսի 2021թ. կնքված
N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-21/3-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Անվանումը	Ապրանքի Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստամիսների, այդ թվում**					
	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Գնված ապրանքի	50%	60%	70%	80%	100%	100%

ԳՆՈՐԴ՝
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ. Փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ.0286-60685

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ-ի տնօրեն՝ / Լ. Վարդանյան

ՎԱՃԱՌՈՂ՝
Ա/Ձ Արտյոմ Կարապետյան
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Ա. Խաչատրյանի 6
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099101233900
ՀՎՀՀ 79510714
Էլ. Փոստ harsam1976@mail.ru
Հեռ. 093753500

Ա/Ձ / / Ա. Կարապետյան